բորդ տող «ցանգայ», յ-ն յետոյ է աւելացրել. դ) տասներորդ տող «քննող», ո-ի ներքին մասը միացրել է, որպէս զի օ դառնայ, որով և սրբագրողի ժամանակը ԺԲ-ի վերջ, ԺԳ. դար կարող ենք համարել։

Այս Զ-ի մասին տես. Արարատ. 1913 թ. Յունուար. Կ. Եպ.-ի յօդուածը։

Նկարուած է 93 եր. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

61. *Մատ. Ս. Էջմիածնի, № 905/832 (Կար. չկայ). Ճաշոց, լուսանցքի զարդերով, մագաղաթ $21^{1}/_{2} \times 16^{1}/_{2}$ սմ., թերթ 250։ ԳԻՐ. Միջին, սքանչելի երկաթագիր, խորաները փոքր երկաթագիր. մի իջեան $14^{1}/_{2} \times 10{,}2$ սմ. ԳՐԻՉ. Գէորգ Սկեւացի (ոչ Լամբրոնացի) բանասիրական ճանապարհով գտնուած. Սկեւայի գրչութեան դպրոցի հնագոյն ներկայացուցիչներից մէկը. «ընդ որս եւ ես ժտիմ պաղատանաւք յընթերցողացդ յիշել զաշխատող սորա զԳեորգ, որ մեծաւ ջանիւ գրեցի զսա յընտիր եւ յազնիւ յաւրինակէ»։ ՍՏԱՑՈՂ. Ստեփանոս քահանայ։ ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեւան։ ԺԱՄԱՆԱԿ 1154 թ. փրկչական. «Ի՛ երրորդի երրորի թ(ուա)ականիս հայւոց գրեցաւ ա՛ ծայլին բուրաստանաց ծաղկազումար մատեանս»։*

Նկարուած է $66^{բ}$. ամբողջ երեսը. 14×10 սմ., մեր նկարը $11{,}3 \times 7{,}8$ սմ.

62. *Մատ. Ս. Էջմ. № 1687/1890 (Կար. 1645) Եղիշէ պատմագիր, թուղթ, թերթ 250։ ԳԻՐ., Անցման երկաթագիր բոլորգրի ձեերով, մի իջեան, $17^{1}/_{2} \times 10^{1}/_{2}$ սմ.։ ԳՐԻՉ. Դաւիթ։ ՍՏԱՑՈՂՔ. Գրիչը և հարազատ եղբայրը Մխիթար։ ՏԵՂ. «ի վանս Կոշա, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփաննոսի»։ ԺԱՄԱՆԱԿ. փրկչական ՌՃՀԴ=1174 թ. «ի հայկազեան թուականիս վեցհարիւրերորդի եւ երկուց տասանց եզակաւ միով աաւելեալ. Եւ ըստ նորում շրջանիս միոյ յոբելենի եւ երից տասանց եւ քառից երկուց» յիշատակարան $208^{ա}$—$208^{բ}$.*

Նկարուած է $208^{ա}$. բնագիրը $17^{1}/_{2} \times 10^{1}/_{2}$ սմ, մեր նկարը $14^{1}/_{2} \times 8^{1}/_{2}$ սմ.։

64. *Մատ. Ս. Էջմ. № 1561/1568 (Կ. 1523) Նարեկ. Նկարազարդ, ազնիւ մագաղաթ $15{,}2 \times 11^{1}/_{2}$, 336 թերթ։ ԳԻՐ. Փոքր երկաթագիր, սքանչելի, մի իջեան, $10{,}2 \times 7^{1}/_{2}$ սմ.։ ԳՐԻՉ. «Զողորմելի գրիչս Գրիգոր, աղաչեմ յիշել ի ա̂ր. $28^{ա}$.։ ՍՏԱՑՈՂ. Ներսէս Լամբրոնացի. «Ստացաւղ սորա զՆերսէս, զորդի մեծազաւր սեւաստոսի Աւշին յիշես. ի ք̂ս $55^{բ}$. տես և $115^{բ}$. $175^{բ}$.։ ՏԵՂ. Անյայտ, բայց հաւանօրէն Սկեւայի վանքը։ ԺԱՄԱՆԱԿ. 1173 թ. փրկչական. «Թու. ՈԻԲ»։*

Ծանօթ. *Առաջին երեսն ամբողջապէս ոսկեգիր է. ազնիւ ոսկով են գրուած նաև գլուխների սկզբնաւորութեան և պարբերութիւնների առաջին տողերը։ Գլուխների վերնագրերը կարմիր և բնագրից աւելի փոքր տեսակի երկաթագրով։*

Նկարուած է $10^{ա}$. ամբողջ երեսը. $10{,}2 \times 7^{1}/_{2}$ սմ., մեր նկարը քիչ փոքր $9{,}7 \times 7{,}2$ սմ։

65. *Մատ. Ս. Էջմ. Գ. № 482/3795 Տօնապատճառ. Կաշեկազմ. $40 \times 26^{1}/_{2}$ սմ., Թուղթ. $40 \times 26^{1}/_{2}$ սմ։ ԳԻՐ. Արևելեան խոշոր բոլորգիր (անցման, միջին*